# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/189**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 02.05.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2022թ. թիվ 26/26-1/7353-2022 գրությամբ «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 19.04.2022թ. թիվ 01/2758-2022 գրության հիման վրա, 26.04.2022թ. թիվ 26/26-1/7353-2022 գրությամբ նախաձեռնել է «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«1. Գործի նախապատմությունը.

1.1. 29.03.2022թ. -ին Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ֆիչըր» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/44-2 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պատվիրատուն Պայմանագրով հանձնարարել է, իսկ Ընկերությունը ստանձնել է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի 2-րդ չափաբաժնի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ իրականացվող Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնի (այսուհետ՝ Ստուգատես-փառատոն) անցկացման նպատակով անհրաժեշտ է ս/թ հունիսի 6-ին, հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, կազմակերպել Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող աշակերտների մասնակցությամբ եզրափակիչ համերգը (այսուհետ՝ Համերգ), որին մասնակցում են Պատվիրատուի կողմից հավաքագրված հայտերում նշված սովորողներից Համերգի մասնակցության իրավունք նվաճած մինչև 10 աշակերտ (այսուհետ՝ Մասնակից): Համերգը պետք է կազմակերպվի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում (այսուհետ՝ Տուն-թանգարան): Համերգից առնվազն 7 /յոթ/ օր առաջ անհրաժեշտ է անցկացնել լսումների փուլ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող երաժշտական և արվեստի որևէ դպրոցում կամ համարժեք տեխնիկական հնարավորություններ ունեցող կրթական հաստատությունում, ընդ որում՝ լսումների փուլի անցկացման վայրն ու ժամանակացույցը անհրաժեշտ է նախապես, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Համերգից առնվազն 7 (յոթ) օր առաջ Տուն-թանգարանի մուտքի

մոտ անհրաժեշտ է տեղադրել Ստուգատես-փառատոնի ազդագիրը (բաններ 2X3 մ), որի դիզայներական լուծումը անհրաժեշտ է նախապես, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Համերգի ողջ ընթացքում, դահլիճի/սրահի մուտքերում, նախասրահներում, փորձասենյակներում ապահովել համապատասխան ախտահանող միջոցների (ալկոգել, դիմակներ) առկայությունը՝ դրանցից օգտվելու հնարավորությամբ: Համերգի անցկացման նպատակով անհրաժեշտ է Տուն-թանգարանի դահլիճը ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով (ելույթների պարագաներ՝ աթոռներ, պուլտեր, լարված և սարքին վիճակում համերգային ռոյալ), ինչպես նաև ըստ Համերգի ծրագրի բովանդակության անհրաժեշտության ապահովել համապատասխան ձայնային և լուսային սարքավորումներ և վերջիններիս սպասարկման համար ձայնային և լուսային ռեժիսորներ: Ընդ որում, Համերգի համար պետք է նախատեսել դահլիճում հրավիրյալ անձանց (ծնողներ, դասատուներ և այլն) համար առնվազն 200 նստատեղ: Մրցույթ-Փառատոնի Մասնակցի գնահատման նպատակով անհրաժեշտ է ապահովել 4 մասնագետից բաղկացած մասնագիտական խումբ /ժյուրի/, ինչպես նաև վերջին բնականոն գնահատման աշխատանքը, ընդ որում՝ վերջիններիս թեկնածությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Համերգի ծրագիրը պետք է նախապես՝վ Համերգի անցկացման օրվան նախորդող առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Համերգը հանդիսավարելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հանդիսավար կամ հանդիսավարներ, սցենարական տեքստ, որն անհրաժեշտ է նախապես՝ Համերգի անցկացման օրվան նախորդող առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ս/թ հունիսի 6-ին, նախքան Համերգի մեկնարկը, անհրաժեշտ է ապահովել Տուն-թանգարանից Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն և հակառակ ուղղությամբ երթուղով առնվազն 60 անձ տեղափոխման համար 2 /երկու/ բարձրակարգ և հարմարավետ տրանսպորտային միջոց: Կոմիտասի անվան պանթեոնում ծաղկեդրման համար անհրաժեշտ է ապահովել 1 (մեկ) ծաղկեպսակ և 120 (հարյուր քսան) հատ սպիտակ մեխակներ: Համերգի մասնակից երեխաների համար ապահովել թեմատիկ հուշանվերներ կամ նվերներ յուրաքանչյուր մասնակցին 30000 /երեսուն հազար/ - 50000 /հիսուն հազար/ դրամ արժեքի սահմաններում, որոնց ապրանքային բովանդակությունն անհրաժեշտ է նախապես՝

Համերգի անցկացման օրվան նախորդող առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ըստ պատվիրատուի կողմից ներկայացված Մասնակիցների դասատուների ցանկի (առավելագույնը 10 դասատու)՝ անհրաժեշտ է հատկացնել դրամական պարգևներ՝ յուրաքանչյուր դասատուին առնվազն 30000 /երեսուն հազար/ դրամի չափով:»

Պայմանագրի թիվ 1 հավելվածի 3-րդ չափաբաժնի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն» ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ)՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի կողմից 26.01.2022թ. հաստատված կարգի: Մրցույթին պարտադիր կարգով և բացառապես մասնակցում են Երևանիենթակայության 25 երաժշտական և արվեստի դպրոցները՝ հետևյալ անվանակարգերում. 1. ԴԱՇՆԱՄՈՒՐ ելույթ են ունենում մասնակից դպրոցի երկու սովորողներ, մեկական ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 10 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 2. ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ելույթ են ունենում մասնակից դպրոցի երկու սովորողներ, երկու տարբեր գործիքներով, մեկական ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 10 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 3. ՓՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ելույթ են ունենում մասնակից դպրոցի երկու սովորողներ, որոնցից մեկը՝ պղնձյա-փողային, մյուսը՝ փայտյա- փողային գործիքով, մեկական ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 10 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 4. ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ /ՄԱՐԻՄԲԱ, ՔՍԻԼՈՖՈՆ ԿԱՄ ՎԻԲՐԱՖՈՆ/ ելույթ է ունենում մասնակից դպրոցի մեկ սովորող, մեկ ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 5 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Երևանի Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 5. ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ ելույթ են ունենում մասնակից դպրոցի երեք սովորողներ, երեք տարբեր գործիքներով, մեկական ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 15 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 6.

ՄԵՆԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ ելույթ են ունենում մասնակից դպրոցի երկու սովորողներ, երկու տարբեր ժանրերում /դասական և ժողովրդական/, մեկական ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 10 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 7. ԵՐԳՉԱԽՈՒՄԲ ելույթ է ունենում մասնակից դպրոցի առնվազն 25 հոգուց բաղկացած երգչախումբը երկու ստեղծագործության կատարմամբ, որից մեկը՝ a capella, տրվում է մինչև 8 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 8. ԴԱՍԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹ ելույթ է ունենում մասնակից դպրոցի 3-12 սովորողից բաղկացած դասական համույթը՝ մեկ ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 8 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 9. ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄՈՒՅԹ ելույթ է ունենում մասնակից դպրոցի 3-12 սովորողից բաղկացած ազգային նվագարանների համույթը՝ մեկ ստեղծագործության կատարմամբ, տրվում է մինչև 8 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 10. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ Մասնակից դպրոցը ներկայացնում է 4 սովորող, որոնցից 2-ը մասնակցում են երաժշտական թելադրությանը, 2-ը՝ երաժշտական գրականության թեստին և ունկնդրմանը: Յուրաքանչյուր փուլի տևողությունը՝ 25 րոպե: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Երևանի Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: 11. ԿՈՄՊՈԶԻՑԻԱ Ներկայացվում է դպրոցի մեկ սովորողի կամերային (վոկալ, գործիքային, վոկալ-գործիքային, անսամբլային) ստեղծագործություն՝ կենդանի կատարմամբ: Տվյալ անվանակարգի ստուգատեսը անհրաժեշտ է անցկացնել Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցի դահլիճում կամ համարժեք այլ դահլիճում: Մրցույթն անցկացվում է 2022 թվականի մայիսի 1-30-ը ժամանակահատվածում՝ պատվիրատուի կողմից հավաքագրված հայտերում նշված սովորողների մասնակցությամբ: Յուրաքանչյուր անվանակարգի անցկացման համար հատկացվում է մեկ առանձին օր, պատվիրատուի հետ նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցված ժամկետներում և Երևան քաղաքում գործող, ըստ անցկացվող անվանակարգերին համապատասխան դահլիճներում, համերգասրահներում, որոնք պետք է տեխնիկական

հագեցվածությամբ (բեմի առկայություն, ելույթի համար անհրաժեշտ պարագաների՝ աթոռներ, ոլտեր, լարված և սարքին վիճակում համերգային ռոյալ, շենքում սանհանգույցների առկայություն և այլն, ինչպես նաև դահլիճի/սրահի ակուստիկ հնչողության հնարավորություններով համապատասխանեն անվանա-կարգի անցկացման պահանջներին: Ընդ որում, վերը շարադրված դահլիճները և համերգասրահները պետք է ունենան նստատեղեր՝ հրավիրյալ անձանց (ծնողներ, դասատուներ և այլն) համար (մինչև 200 անձ)՝ ապահովելով Մրցույթի անցկացման համերգային ձևաչափը: Մրցույթի «Երաժշտության տեսություն» անվանակարգի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել առնվազն 50 աշակերտի մասնակցության հնարավորություն (սեղաններ, աթոռներ, նոտայի թղթեր, մատիտներ և այլն), բացի այդ՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի հաստատմանը ներկայացնել սոլֆեջիոյի թելադրության առարկայական առնվազն 3 տարբերակներ: Անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում թելադրություն անցկացնող մասնագետի թեկնածությունը գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նույն անվանակարգի երաժշտական գրականության թեստի բովանդակությունը, բաղկացած երաժշտական գրականությանը վերաբերող առնվազն 30 առարկայական հարցերից, ինչպես նաև ունկնդրման փուլի համար նախատեսված երաժշտական առնվազն 20 ստեղծագործությունների տարբերակները անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը՝ նշված փուլում առնվազն 10 ստեղծագործությունների հատվածային կատարման հնչյունային համապատասխան սարքավորումներով վերարտադրելու նպատակով: Յուրաքանչյուր անվանակարգի համար /բացառությամբ «Երաժշտության տեսություն» անվանակարգի/, անհրաժեշտ է ապահովել հաղորդավար, որի թեկնածությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Յուրաքանչյուր անվանակարգում դպրոցների մասնակցության բնականոն ընթացքն ու ճշգրիտ և ժամանակին ելույթն ապահովելու նպատակով նախատեսել համապատասխան համակարգողների աշխատանքը: Յուրաքանչյուր անվանակարգում կազմակերպվող ելույթների ընթացքում ապահովել շարժական բանների առկայությունը անվանակարգի անցկացման դահլիճում/ սրահում, որի դիզայներական լուծումներով տարբերակները, այնուհետև՝ պատրաստի նմուշը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ

մտնելուց հետո առնվազն 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Յուրաքանչյուր անվանակարգում /բացառությամբ՝ «Երաժշտության տեսություն» անվանակարգի/ մասնակիցների պատշաճ ելույթի ապահովման նկատառումներից ելնելով՝ ըստ անհրաժեշտության, կազմակերպել նախնական փորձեր, յուրաքանչյուր մասնակցին հատկացնելով առնվազն 30 րոպե նախաելույթային փորձաժամ՝ անվանակարգի անցկացման դահլիճում/ սրահում՝ ելույթին նախորդող օրվա ընթացքում: Յուրաքանչյուր անվանակարգում մասնակցի /մասնակիցների/ գնահատման նպատակով անհրաժեշտ ապահովել 3 մասնագետից բաղկացած մասնագիտական խմբի /ժյուրիի/ աշխատանքը, ընդ որում՝ վերջիններիս թեկնածությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուի հաստատմանը: Մասնակցի յուրաքանչյուր կատարումից հետո /բացառությամբ «Երաժշտության տեսություն» անվանակարգի/ ժյուրիի կողմից գնահատելու նպատակով անհրաժեշտ է ապահովել 1-10 գնահատման ցուցանակներ՝ 3 օրինակից: Մրցույթի ողջ ընթացքում, դահլիճի/սրահի մուտքերում, նախասրահներում, փորձասենյակներում ապահովել համապատասխան ախտահանող միջոցների /ալկոգել, դիմակներ/ առկայությունը՝ դրանցից օգտվելու հնարավորությամբ: Ա. Խաչատրյանի անվան համերգասրահում կամ համարժեք այլ համերգային դահլիճում 2022 թվականի հունիսի 1-15 ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է կազմակերպել առնվազն մեկ ժամ տևողությամբ Գալա-համերգ, որի անցկացման ժամկետներն ու վայրը անհրաժեշտ է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Գալա-համերգի անցկացման համար անհրաժեշտ է կազմակերպել Պատվիրատուի կողմից ներկայացված, Մրցույթի արդյունքում առավել բարձր գնահատականներ ստացած մասնակիցների համերգային ելույթները՝ մշակելով համերգային ծրագրի կոնտենտը, որը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Անհրաժեշտ է ապահովել Գալա-համերգի անցկացման համերգասրահը 2 օրվա համար, առաջին օրը՝ առնվազն 6 ժամ տևողությամբ փորձեր անցկացնելու, երկրորդ օրը՝ համերգային ծրագրի իրականացման նպատակով: Փառատոնի փորձերի և համերգային ելույթների համար ըստ անհրաժեշտության, ապահովել ձայնային և լուսային, այլ սարքավորումներով, ինչպես նաև օժանդակ- սպասարկող անձնակազմով: Նշված սարքավորումները դահլիճում ապահովել փորձերի անցկացման մեկնարկից առնվազն 5

ժամ առաջ: Հանրահռչակման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել պրոմո տեսահոլովակի պատրաստման աշխատանքներ, որի տևողությունը պետք է լինի առնվազն 1 րոպե: Տեսահոլովակի վերջնական արդյունքը պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ գալա համերգի մեկնարկից առնվազն 10 /տաս/ օր առաջ և հանձնել պատվիրատուին ներբեռնման հնարավորությամբ: Համերգասրահի ճակատային հատվածում անհրաժեշտ է տեղադրել 8.5մ X 3մ չափով բաններ, Գալա-համերգից առնվազն 10 օր առաջ: Գալա-համերգին հանդիսատեսի մասնակցությունն ապահովելու և Փառատոնի հանրահռչակման նպատակով անհրաժեշտ է պատվիրատուին տրամադրել համերգասրահի նստատեղերի քանակին համապատասխան հրավիրատոմսեր, գալա-համերգից առնվազն 10 օր առաջ: Ընդ որում, բաների և հրավիրատոմսի դիզայներական լուծումներով տարբերակները, այնուհետև՝ պատրաստի նմուշները անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված գալա համերգի հրավիրյալների ցուցակին համապատասխան անհրաժեշտ է հրավիրված անձանց հրավիրատոմսերի փոխանցումը /առաքումը/ կազմակերպել գալա համերգից առնվազն 7 /յոթ/ օր առաջ: Համերգասրահի բեմի դիմային հատվածը՝ համերգային ծրագրի մեկնարկից առնվազն 3 ժամ առաջ ձևավորել բնական ծաղկե շղթայով՝ յուրաքանչյուր կողմից առնվազն 6 մետր երկարությամբ: Օգտագործվող ծաղիկները, ինչպես նաև ծաղկային կոմպոզիցիաների ձևավորման տարբերակները անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Համերգասրահի ֆոյեում /նախասրահում/ անհրաժեշտ է կազմակերպել լուսանկարահանման ստենդ (բաներ)՝ 6X3 մ չափերով, որի վրա տպագրված պետք է լինեն Մրցույթ-փառատոնի խորհրդանիշները, տարեթիվը և այլ տեղեկատվություն: Ստենդի դիզայնը, տպագրական նյութը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Համերգային ծրագիրը հանդիսավարելու նպատակով ապահովել հանդիսավար կամ հանդիսավարներ, հանդիսավարման սցենարական խոսք, վերջիններս անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ: Անհրաժեշտ է իրականացնել Գալա-համերգի տեսանկարահանման աշխատանքները՝ առնվազն 6-7 թվային՝ sony alpha

a7 iii կամ համարժեք տեսախցիկներով և 1-2 հատ GoPro կամ համարժեք (գործիքների վրա ամրացվող) տեսախցիկներով, իսկ նկարահանված, չմոնտաժված և մոնտաժված տեսանյութերը փոխանցել պատվիրատուին, ոչ ուշ, քան Գալա-համերգին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում: Գալա-համերգի ընթացքում, Մրցույթի արդյունքներով Պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված լավագույն 5 /հինգ/ դպրոցներին հանձնելու նպատակով, անհրաժեշտ է պատրաստել 5 հատ /ոսկեգույն/ բրոնզե ձուլվածքով խորհրդանշական արձանիկներ, որոնց էսքիզները, այնուհետև պատրաստի օրինակը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 15 /տասնհինգ/ աշխատանքային օրերի ընթացքում գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ:»

Կատարելով Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ 21. 03. 2022թ-ից մինչև 20. 04. 2022թ-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունը ուղարկել է Պատվիրատուին թվով 18 գրություն: Գրություններում Ընկերությունը մանրամասն շարադրել է և գրություններին կցել է այն բոլոր նյութերը որոնք Պայմանագրի համաձայն պետք է համաձայնեցվեին Պատվիրատուի հետ: Սակայն առանց հիմնավոր պատճառաբանության Պատվիրատուն այդ նյութերից որոշները մերժել է և 13. 04. 2022թ. -ի թիվ 13/2232-2022 գրությամբ Պայմանագրից միակողմանի հրաժարվելով այն համարել է լուծված: Այնուհետև Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2. Գործի փաստական հանգամանքները.

2. 1. 21. 03. 2022թ-ից մինչև 20. 04. 2022թ-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունը ուղարկել է Պատվիրատուին թվով 18 գրություն: Գրություններում Ընկերությունը մանրամասն շարադրել է և գրություններին կցել է այն բոլոր նյութերը որոնք Պայմանագրի համաձայն պետք է համաձայնեցվեին Պատվիրատուի հետ: 08.04.2022թ-ի գրությամբ Պատվիրատուն տվել է Ընկերությանը 1 աշխատանքային օր ժամանակ, որպեսզի վերջինս ներկայացնի այն բոլոր համաձայնեցումները որոնք Ընկերության կողմից մինչ այդ չէին ներկայացվել կամ (ըստ Պատվիրատուի) ներկայացվել էին թերի:

1) 01.04.2022թ-ի թիվ 13 գրությամբ Ընկերությունը համաձայնեցման նպատակով Պատվիրատուին է ուղարկել N1 հավելված տեխնիկական բնութագրի 2-րդ «Արամ Խաչատրյանի ծննդյան օրվան նվիրված փառատոն մշակութային միջոցառումների

կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ ստուգատես-փառատոնի ազդագրի դիզայներական լուծումը, սակայն անհասկանալի պատճառաբանությամբ 04. 04. 2022թ. -ի թիվ 13/716 գրությամբ Պատվիրատուն այն մերժել է, որից հետո Ընկերությունը 11. 04. 2022թ. -ի թիվ 16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել ազդագրի նոր դիզայներական լուծում՝ որը նույնպես մերժվել է, դրանից հետո Ընկերությունը 12. 04. 2022թ. -ի թիվ 17 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել ազդագրի ևս մեկ՝ նոր դիզայներական լուծում, այդ դիզայներական լուծումը Պատվիրատուն նույնպես մերժել է: Հարկ է նշել, որ մերժումներից ոչ մեկում Պատվիրատուն հստակ չի նշել թե ինչ է ցանկանում տեսնել ազդագրի դիզայներական լուծումներում, ինչը անհնար է դարձրել դիզայներական լուծումը Պատվիրատուի պահանջներին համապատասխանեցնելը:

2) 30.03.2022թ.-ի թիվ 6 գրությամբ Ընկերությունը համաձայնեցման նպատակով Պատվիրատուին է ներկայացրել N1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ «Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ անվանակարգերում կազմակերպվող ելույթների ընթացքում տեղադրվելիք շարժական բաների դիզայներական լուծումներով տարբերակները, սակայն Պատվիրատուն այդ տարբերակները 31. 03. 2022թ-ի թիվ 13/41638 գրությամբ մերժել է, որից հետո 31. 03. 2022թ. -ին թիվ 11 գրությամբ և 01. 04. 2022թ. -ի թիվ 12 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է Պատվիրատուին բաների դիզայներական նոր լուծումներ, որոնք նույնպես մերժվել են:

3) 01.04.2022թ. թիվ 12 գրությամբ Ընկերությունը համաձայնեցման նպատակով Պատվիրատուին է ներկայացրել N1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ «Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ գալա-համերգի համերգային ծրագրի կոնտենտը, սակայն Պատվիրատուն այդ տարբերակները 04. 04. 2022թ-ի թիվ 13/13484 գրությամբ մերժել է, որից հետո 11. 04. 2022թ. -ին թիվ 16 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է Պատվիրատուին գալա-համերգի համերգային ծրագրի կոնտենտի լրամշակված տարբերակը, որի վերաբերյալ Պատվիրատուն որևէ կարծիք չի հայտնել՝ ո՛չ ընդունել է, ոչ էլ մերժել:

4) 30.03.2022թ. թիվ 9 գրությամբ Ընկերությունը համաձայնեցման նպատակով Պատվիրատուին է ներկայացրել N1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ «Երևան

քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ գալա-համերգի բաների և հրավիրատոմսի դիզայներական լուծումներով տարբերակները, սակայն Պատվիրատուն այդ տարբերակները 31.03.2022թ. հ. 13/41638 գրությամբ մերժել է, որից հետո նույն օրը՝ 31. 03. 2022թ. -ին թիվ 11 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է Պատվիրատուին բաների և հրավիրատոմսի դիզայներական լուծումների նոր տարբերակներ, որոնց վերաբերյալ Պատվիրատուն որևէ կարծիք չի հայտնել՝ ո՛չ ընդունել է, ոչ էլ մերժել:

5) 01.04.2022թ. հ. 12 գրությամբ ընկերությունը համաձայնեցման նպատակով Պատվիրատուին է ներկայացրել Պայմանագրի N1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ «Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ գալա-համերգի ստենդի դիզայնը և տպագրական նյութը, սակայն Պատվիրատուն այդ տարբերակները 04.04.2022թ. հ. 13/1484 գրությամբ մերժել է առանց հստակ նշելու իր կողմից ցանկալի տպագրման նյութը և ինչ է ցանկանում տեսնել դիզայներական լուծումներում:

6) 08.04.2022թ-ի գրությամբ Պատվիրատուն տվել է Ընկերությանը 1 աշխատանքային օր ժամանակ, որպեսզի վերջինս ներկայացնի այն բոլոր համաձայնեցումները որոնք Ընկերության կողմից մինչ այդ չէին ներկայացվել կամ (ըստ Պատվիրատուի) ներկայացվել էին թերի: 08. 04. 2022թ. -ին հաջորդող աշխատանքային օրը ապրիլի 11-ն էր: 11. 04. 2022թ. -ին Ընկերությունը 11. 04. 2022թ. -ի թիվ 16 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել N1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ «Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես մրցույթ-փառատոն մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» չափաբաժնով նախատեսված՝ գալա-համերգի սցենարական խոսքը: Ուստի սցենարական խոսքը Պատվիրատուին ներկայացվել է պաշաճ ժամկետում:

3. Գործի փաստական և իրավական հիմքերը.

3. 1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ (...), մատուցել ծառայություն և այլն, (...), իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից (...),:»

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, (...) համապատասխան (...):

Օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը:

Օրենսգրքի 421րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ պարտավորությունը չի կարող կատարվել պարտատիրոջ կետանցի հետևանքով:

Օրենսգրքի 422-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերը կետանցող է համարվում, եթե նա հրաժարվել է պարտապանի առաջարկած պատշաճ կատարումն ընդունելուց (...) կամ չի կատարել պայմանագրով սահմանված (...) գործողություններ, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից՝ Ընկերությունը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, այն է՝ Պայմանագրով սահմանված ժամկետում ուղարկել է Պատվիրատուին բոլոր այն նյութերը որոնք պետք է համաձայնեցվեին վերջինիս հետ, սակայն Պատվիրատուն առանց հիմնավոր պատճառի այդ նյութերից որոշները մերժել է, ավելին՝ մերժումներում Պատվիրատուն հստակ չի նշել թե ինչ է ցանկանում տեսնել այդ նյութերում, ինչը անհնար է դարձրել դրանք Պատվիրատուի պահանջներին համապատասխանեցնելը: Իսկ որոշ դեպքերում Ընկերության կողմից ներկայացված

նյութերի վերաբերյալ Պատվիրատուն որևէ կարծիք չի հայտնել, այն է՝ ո՛չ ընդունել է, ոչ էլ մերժել: Օրինակ՝ 31. 03. 2022թ. -ին թիվ 11 գրությամբ ներկայացված բաների և հրավիրատոմսի դիզայներական լուծումների ու 11. 04. 2022թ. -ին թիվ 16 գրությամբ ներկայացված գալա-համերգի համերգային ծրագրի կոնտենտի լրամշակված տարբերակի մասին Պատվիրատուն որևէ կարծիք չի հայտնել: Մինչդեռ Պայմանագրի համաձայն Պատվիրատուն պարտավոր էր մատուցված ծառայությունը կամ ընդունել կամ մերժել, ընդ որում մերժումը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված:

Ուստի նշյալից հետևում է, որ Ընկերությունը Պայմանագրով սատնաձնած պատվորությունները կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, սակայն Պատվիրատուն անհասկանալի պատճառաբանությամբ և ոչ հիմնավոր մերժել է Ընկերության կողմից Պայմանագրով կատարածը: Արդյունքում՝ Պատվիրատուն խախտելով Պայմանագիրը միակողմանի հրաժարվել է Պայմանագրից և համարել է այն լուծված:

Հատկանշական է, որ Պատվիրատուի ուղարկած նյութերում առկա չեն, սույն գործի համար էական նշանակություն ունեցող՝

- Պատվիրատուի 08.04.2022թ-ի գրությունը,

- Ընկերության 31. 03. 2022թ. -ի թիվ 11 և 12. 04. 2022թ. -ի թիվ 17 գրությունները և դրանց կից նյութերը,

- Ընկերության 30. 03. 2022թ. -ի թիվ 6 և 01. 04. 2022թ-ի թիվ 12 և 13 գրություններին կից նյութերը:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ ընկերության գործողությունները չեն կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը, քանի որ Ընկերությունը Պայմանագրով սատնաձնած պատվորությունները կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: Ելնելով նշյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

խնդրում ենք՝

ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ֆիչըր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/189 ծածկագրով ընթացակարգը:»:

«ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/189 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.04.2022թ. թիվ 01/2758-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 29.03.2022թ. NԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/44-2 ծածկագրով կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համախատասխան և N2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով»:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի 04.04.2022թ. հ. 13/1484 և 08.04.2022թ. հ. 13/488 գրություններով Ընկերությունը տեղեկացվել է ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու մասին, սակայն, Պայմանագրով սահմանված մի շարք պարտավորություններ Ընկերության կողմից չեն կատարվել:

Մասնավորապես՝

